« Երկիրս մընայ անխըռնամ:
« Թողեալ զքաղաքս, ըղտունս, ընկերս սիրալիս
« Դիմեմք յախուռն 'ի լերինս:
« Զի մի այլ ևս գործեալ զերկիրս յոքնամարդ,
« Խըրոխտն Հռովմայ տացուք զորդիս մեր Ներկուն,
« Զոր յարհամարհ ունի անտես և՛ի նախատ:
« Ո՛ւր թէ ծընունդք մեր կենդանիք որք այժմ կան
« Մահ ըղնոսա տանէր յաւար տարաժամ...
« Գըրեսորք ձեր ըղմեզ եղուկս և թըշուառս
« Վարեն գործել զաններելի ըղյանցանս:
« Ի բաց տարէք զարսդ անօրէն,
« Որք առ մեզ զախտս և զվատութիւն ճարակեն:
« Գերմանացիքս լիցին նոցա հանգունակ
« Ցափըշտակօղք և ագահք:
« Եւ զայս ահա, 'ի քաղաքիս ես տեսի.
« Եթէ չեն քեզ նըւէրք և տուրք 'ի կաշառ
« Եւ կամ ընծայ ազնիւ ծովու ծիրանի,
« Ցարդարութիւն մի յուսասցիս դու 'ի սպառ,
« Ցերկար անտես մնայցես դատ,
« Այլ թէ պընդես, դու ինքդ լինիս դատապարտ:
« Թերևս բանք իմ անաչառ
« Ջեղեն հաճոյ յայս կաճառ:
« Լըռեմ ահա: Տուք զիս մահու.
« Վասըն բանիցս բողոքարկու »:
Զայս ասելով, անդէն 'ի գուճըս անկաւ.
Զամենեսին պարմանք հիացումն ահ կալաւ,
Ընդ մեծ սիրտ առն, ընդ խօսս արդար
Եւ ընդ ճարտար բանիցըն չար:
Անդ առ ետեղ գրեցաւ գեղջուկն այն արի
Ընդ պատրըկացն համարի:
Ցետս պրետորք անդրէն 'ի Հռովմ կոչեցան:
Ծերակուտին հրամանաւ
'Ի գիր հանին զգեղջկին բան,
Օրինակի աղագաւ.
Զի յապագայս թէ ոք ճառել կամիցի,
Իբր օրինակ՝ զայս բան հանդէպ ունիցի:
Սակայն Հըռովմ ոչ յերկար
Գընաց ընդ այն ճանապարհ:

ԼԱՖՈՆԹԷՆ

ԵՐԿԱԹ ԵՒ ՈՒՌՆ

Դըժոխքի նըման փուռէն՝ հանելով
Կաս-կարմիր երկաթն, և ունելիքով
Մեծ սալին վըրայ՝ հեռուէն բըռնած,
Երբ կը ծեծէին խոշոր մեծ Ուռով,

digitised by A.R.A.R.@

Սալին ուռին մէջ խեղճը դումարած
Խորոված սրբտէն կայծեր ժայթքելով,
« Խրդճացէք վրրաս, ասաց տրքալէն,
« Աղատեցէք զիս այս ուռիս ձեռքէն »։
Վրրան չատ չանցաւ, երկաթին կըտոր
Սալէն վար իջաւ, ծեծէ ազատած,
Եւ ինքը շինուած ուռ մի մեծափոր։
Կ'ասեն, Ա.յն երկաթ որ ուռն էր փոխուած,
Նոյն սալին վրրայ, ուր ծեծ էր կերած,
Ընխնայ կը ծեծէ ամեն դիմակաց։

Օրինակ մի ունիս Նրման,
Արի պատմեմ քեզ, բարեկամ.
Օր մի առաջ մեր կրրպոն
Կը բամբասէր իւր աղան
Թէ՝ « Անգութ է անըզգամ ».
Դորա տբւին նոր պաչտօն,
Կրրպոն եղաւ դատաւոր.
Ա.յլ դատաւոր, ահաւոր։
Ո՛ւր տեղ խօսքերն երեկուան.
Արհամարհեց ամեն բան։
Խրդճմիտանք գութ մէկ դի դրրած
Մէջ տեղ ելաւ գաղան դարձած։
Խրւեց զայրիս և որբեր,
Գրրպան լեցուց հազարներ։

Ա.յդպիսեաց գրլխէն, ողորմած Ա.ստուած,
Կ'աղաչեմք չանես Ուռրդ անպակաս։

ԵՐԿՈՒ ԱՂԱ.ԻՆԻՔ

Երկու սիրուն աղաւնիք,
Ինչպէս աղրար ու քուրիկ,
Մէկ բունի մէջ կ'ապրէին
Սիրով կապուած անմեկին։
Մէկ տեղ էր նոցա կերածն ու խրմած,
Վիչա, ուրախութիւն էր հասարակաց։
Նոցամէ մէկուն, չեմ գիտեր ինչու,
Փափաք մի եկաւ աշխարհք տեսնալու։
— « Ինչու, ընկերըն ասաց,
« Զիս միս մինակ հոս թողած,
« Կ'ուզես երթալ, սիրելիս։
« Քեզի հոս տեղ ինչ կը պակսի.
« Հունտ, կերակուր, տաք բունիկ,
« Ամենայն բան կայ պատրաստի։
« Զըմեռն անցնենք հոս, հոգիս.
« Երբ ամառուան տաք հովիկ

digitised by A.R.A.R.@

« Դաշտեր, ծառներ զարդարէ,
« Այն ժամանակ, ջոկ բան է,
« Մէկ տեղ կ'երթանք քալելու ։
« Հիմա աշունք է, հով, քամի,
« Հազար փորձանք կը պատահի ։
« Հեռու ծածքէ ու տունէ,
« Բաց տեղ ապրիլ դըժուար է ։
« Ես բոլոր օր, գիշերներ
« Պիտի մաշուիմ՝ քու վըրադ.
« Ելթէ յանկարծ մի սև բաղդ
« Կարճըցընէ քու օրեր ...
« Չէ, չէ, կեցիր, անխըղճմըտանք,
« Մի՛ գիս լթողուր որբ, միայնակ »։
Թէպէտ և խօսքերս անոյշ, գառնագին,
Ճամբորդ աղաւնոյն շատ դըպան սըրտին.
Այլ մեծ փափաք ճամբորդութեան
Յաղթեց սիրոյն ընկերական ։
Բացաւ թևերըն թռաւ գընաց.
Թողուց ընկերըն սիրտ կոտրած ։
Բայց անտառէն դեռ դուրս չելած,
Թուխ թուխ ամպեր վեր բարձրացան,
Գոռաց երկինք ահագնաձայն,
Թունդ դող ելաւ բոլոր անտառ,
Անձրևն իջաւ հեղեղաբար,
Գետին դարձաւ ովկիանոս,
Ջուրըն ծածկեց ըզդար, ըզփոս ։
Մեր աղաւնին անճարակ
կաղնի ծառի մ' մըտաւ տակ ։
Ամպոց ամեն գոռումին,
Ամեն փայլակ ծագածին
Խեղճին լեղին կը պատռէր,
Սիրտը դըփ դըփ կը զարնէր ։
— Երկար չիգար յորդ անձրև. —
Ճառագայթեց լոյս արև.
Մեր աղաւնին թափեց թևեր,
Սաւառնեցաւ յերկինս 'ի վեր ։
Թըռած միջոցըն անկասկած,
Վարէն տեսաւ ցորեն ցանուած,
Փորը շատ էր անօթեցած,
Դէպ 'ի ցորեն կամաց կամաց
Իջաւ ։ Այլ տես, մի ոտն յանկարծ
Փաթթեց իսկոյն հօն լարուած ցանց ։
Թօթուեց թևեր, ու ճորով
Ցանցին մի թել կըտրելով,
Մի թևն խեղդած,
Մի ոտք խախտած,
Թըռաւ առաջ ։
Եւ ահա մի նոր փորձութիւն

digitised by A.R.A.R.@

Պատահեցաւ խեղճ աղաւնոյն ։
Կայծակի նըման՝ չըգիտեմ ուստի
Մօտեցաւ, հասաւ աղաւնոյն՝ Բազէն ․
Աղաւնին վախէն խըղդըւէր պիտի
Եթէ որ շուտով նորա ետևէն
Զըգար չը հանէր
Արծիւ գիշակեր ․
Որ իսկոյն նոյն վայրկենին
Խըլեց զհոգի Բազէին ։
Անտէր թըռչուն սարսափած,
Կըրկին մահէ, իբր հըրաշքով, ազատած,
Ցանկի մի քով սըմքած սըքլած,
Կը մտածէր գըլխէն անցած ։
Ահա քեզի այլ փորձութիւն ․
Չար տըղըուն մին քար չընետէ՜,
Աղաւնեկին չիտակ գըլխուն ․
— Տըղայ սատըդ. մեղք՝ վարձ չգիտէ ։ —
Անբաղդ հաւիկ գըլուխը ծակ,
Փետրակորոյս խաղք խայտառակ,
Թևը խեղցած, ոտքը խախտած,
Աճապարեց յետ՝ տուն գընաց ։
Բաղդըն այն էր որ՝ ընկերն
Աչքը դըռան՝ կը սպասէր ։
Վըրայ գըլխու դեղ դարման
Ըրաւ ընկերն սիրական ։
Ասկէ ետև ոչ բընաւ
Աղաւնեկին միտք չեկաւ
Ոչ տաք ամառն և ոչ գարուն
Ընելու նոր ճամբորդութիւն ։

Ադամորդի, քեզի կ՚ասեմ,
Սորվէ անփորձ աղաւնեկէն
Որ՝ թէ ունիս տուն՝ անկիւն
Կամ ընտանիք սիրասուն,
Գոհ չէն սըրտով հոգ տար նոցա,
Անկէց ազնիւ բան չըկայ ։
Այլ թէ թողած տուն տեղ մէկդի,
Հաճոյք փընտռես յօտար երկրի,
Շատ փորձութեանց կը հանդիպիս ․
Լաւ, խեղանդամ եթէ պըրծիս ։

ՔՌԻԼՈՎ

digitised by A.R.A.R.@